

**Տ. ՏԱՃԱՏ ԱԲԵՂԱ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(1 մայիսի 2005 թ.)

*«Ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել
ևս ունիցին»:*

(Ղով. Ժ 10)

«Յանուն Տօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն»:

Շուրջ 40 օրեր են անցել այն օրվանից, երբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Կրկնապատկարով հրեշտակաձայն ավերիչ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության. ավերեց և Իր սուրբ խորաններից օրհնաբեր ողջույնը փոխանցեց հավատարմոր Իր զավակներին՝ ասելով. «Քրիստոս յայնաւ ի մեռելոց: Ձեզ և մեզ մեծ աւերիս: Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Եկեղեցին մեր՝ հոգևորականաց և աշխարհականաց համախմբությամբ օրհնեց Հարությունը Քրիստոսի և Դավիթ մարգարեի շուրթերից բխած բառերը սաղմոսեց՝ «Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք Նորա» (Մաղմ. Կէ 1-2):

Դավթյան այս արարահայտությամբ էր, որ հրեշտակը ողջունեց յուզաբեր կանանց և ամբողջ մարդկությանը՝ ասելով. «Այսպեղ չէ, այլ հարյալ» (Ղով. ԻԴ 6): Այսպեղ չէ այլևս Նա, Ում փնտրում եք և «Ինչո՞ր Ողջին մեռյալների մեջ եք փնտրում» (Ղով. ԻԴ 5), չէ՞ որ դեռ Իր կենդանության ժամանակ էր ասել. «Իշխանություն ունեմ այն փալու և իշխանություն ունեմ վերստին այն առնելու. այս պատվերն Իմ Հորից սրացա» (Ղով. Ժ 18): Չէ՞ որ գայթակղության առիթ էին դարձել խրայելացիների համար Կերուկական բառերն այն, երբ Հիսուս խոսում էր Իր մարմնի փաճարի մասին՝ ասելով. «Քանդեցեք այդ փաճարը, և երեք օրվա ընթացքում այն կվերականգնեմ» (Ղով. Բ 19), և նմանափայ բազում այլ վկայություններ են հիշարարվում Սուրբ Գրքում Քրիստոսի Խաչելության և Հարության վերաբերյալ:

Այսօրվա Ճաշու Ավերարանից վերցված բնաբանը ևս գալիս է փաստելու Հարության խորհուրդը և իրողությունը՝ «Ես եկա, որպեսզի կյանք ունենան և առավել ևս ունենան» (Ղով. Ժ 10), և նույն Ավերարանի մեկ այլ մասում ասում է. «Եվ դուք չեք կամենում դեպի Ինձ գալ, որպեսզի կյանք ունենաք» (Ղով. Ե 40): Ո՞ր կյանքի մասին է խոսում Երկնավոր մեր Վարդապետը, բարի և քաջ Ղովիլը մեր. մի՞թե Քրիստոսից առաջ կյանք գոյություն չուներ, իսկ եթե կյանք կար, ապա ինչո՞ր է Քրիստոս ասում՝ «Ես եկա, որ կյանք ունենան»:

Շարակնոցում ասվում է. «Որ համբերեաց խաչի եւ եղաւ ի նորափոր վիմի եւ աստուածային յարութեամբն զմահացեալսն վերածեաց ի կեանս», այսինքն՝ Նա, Ով համբերեց Խաչի մահվան և դրվեց նորափոր վեմի մեջ, Նա էր, որ աստվածային Իր Հարությամբ մահացածներին անմահ ու հավիտենական կյանք պարգևեց: Քրիստոս Ինքն է վկայում Իր մասին՝ ասելով. «Ես իսկ եմ Յարութիւն և Կեանք. որ հաւարայ Յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ» (Ղով. ԺԱ 25): Ուրեմն, Հիսուս՝ Ինքը Կյանքը հավիտենական, եկավ, որպեսզի ապրեցնի, վերականգնի ու վերանորոգի մեր կյանքը, ջրողնի այն մահվան սրվերների մեջ:

Որդին Աստծո՝ Հարուցյալ Փրկիչը մեր, Իր Հարությանը փվեց մեզ համարձակությունը հաղթական կանգնելու մահվան առաջ և ասելու. «Ո՛ր է, մահ, քո հաղթությունը, ո՛ր է, գերեզման, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55):

Եվ, իրապես, այսօր, երբ մենք ազգովի ուրբի ենք ելն՝ միահույլ դադարալարելու մեր ժողովրդի հանդեպ օսմանյան Թուրքիայի կողմից 20-րդ դարասկզբին կարարած ոճրագործությունը, մեր սրտերում և հոգիներում իշխող զգացումը մեզ թելադրում է, որ հարությանը հավաքագող և հարությանը ապրող մարդը՝ հայ քրիստոնյան, երբեք չի կարող ծնկել ոչ մի բռնության և կամ նեղության առջև, քանզի «ընկալ մահ ի յաղթութիւն», այսինքն՝ «մահը կուլ գնաց հաղթության» (Ա Կորնթ. ԺԵ 54):

Անշուշտ, դառն փարիսերն այսօր անցյալ են դարձել մեզ համար, սակայն երբեք չեն անցել, չեն հնացել ու չեն մոռացվել, որովհետև Քրիստոսի Հարությանը լեցուն կարողացել ենք դուրս գալ գերեզմանված վիճակներից՝ արդար ու համառ պայքար մղելով մեր հոգիները հավաքելով սնող մեկ Եկեղեցու և մեկ Հայրենիքի անսասանության համար: Քրիստոս մշտապես քաջալերել է մեզ Իր ոգևորիչ արքայապետությանը՝ «Մի՛ խռովեսցին սիրտը ձեր, այլ հաւարացէք յԱստուած, եւ Յիս հաւարացէք»: «Թող ձեր սրտերը չխռովեն, այլ հավաքացէք Աստծուն և Ինձ հավարացէք» (Նովի. ԺԴ 1), և հետո ավելացնում է. «Յաշխարհի ատր նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք զի Ես յաղթեցի աշխարհի» (Այսպեղ՝ աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցեք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին) (Նովի. ԺԶ 33):

Արդ, քանզի գիտենք աներկբայորեն, «զի Աստուած ընդ մեզ է», հնարավոր է արդյոք, որ մեզ փկար ու պարսկած զգանք, կամ ինչպե՞ս կարող ենք Կյանքը թողնել և մեր կյանքում մահն ուղեկից մեզ դարձնել: Չե՞ որ Կյանքն Ինքը մեզ ընդառաջ եկավ՝ մեր վերքերին դարման դնելու, սպիացյալ վերքերը մեր գինով եւ ձեթով օծելու, բուժելու և այդպես խնամք փանելով մեզ փեր ու պաշտպան կանգնելու:

Փառք Բեզ, Տեր, որ անսահման գթությամբ խնայեցիր ազգիս Հայոց՝ ամենահաս Ձեռքդ պարզելով և ուրբի կանգնեցնելով Քո պարկերով ու նմանությամբ սքեղծված արարածներին: Փառք և գոհություն Բեզ, ով Աստված մեր Սրբազան Հայրերի, Արարիչ երկնի և երկրի, Քո օգնությամբ միայն փրկվեց ու ապրեց ժողովուրդը Հայոց, հակառակ որ բազմիցս գերեզման իջեցվեց, սակայն և անգերեզմանելի ու հավեր հարուցյալ մնաց և չբավարարվեց հարուցյալ մնալով, այլ ապրեց հարութենական Իր կյանքը՝ անհատում սքեղծագործ իր աշխարանքով, հավաքելով իր սուրբ, առ Աստված ունեցած հույսով իր հասարակություն և քրիստոսյան սիրով առլեցուն:

Թող որ այսօր, սիրելիք, որպես Քրիստոսով վերածնված նոր ժողովուրդ, նորոգենք քրիստոսապարզ հավաքելով ձևավորված մեր կյանքի ուղին, ուղի, որ բացված է մեզ համար Աստվածորդու՝ Տիսու Քրիստոսի Հարության շնչով, որը լուսավորել ու միշտ պայծառ է պահել մեր ազգի միտքն ու գիտակցությունը:

«Օրհնութիւն Հայր Աստուծոյ, Մեր Միաձնի Նորա՝ Յիսուս Քրիստոսի եւ Շնորհ Նոգույն Աստուծոյ հանապազ եղիցին ընդ ամենեսեանս. ամէն»: